

<https://doi.org/10.52027/18294685-ghh2023.2>

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ՀԱՅՈՑ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԼԻՐ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Բանալի բառեր՝ արդյունաբերական հեղափոխություն, գրավոր ժառանգություն, հաղորդակցություն, փաստագրված հիշողություն, լեզվական կորպուսներ, լեզվական գիտակցություն, ինքնագիտակցություն, ինտեգրում:

Keywords: industrial revolution, written heritage, communication, documented memory, language corpora, linguistic consciousness, self-consciousness, integration.

Հայոց գրավոր մշակույթ ասելով հասկանում ենք այն ամբողջ գրավոր ժառանգությունն ու արդի իրողությունը, որը կապվում է հայ ժողովրդի հետ՝ ձևավորման վաղ շրջանից մինչև մեր օրերը, վիմագիր արձանագրություններից մինչև երկաթագիր ձեռագրեր, զարդագիր մանրանկարներից մինչև տպագիր գրքեր և պարբերականներ: Գրավոր խոսքի զարգացումով է պայմանավորված կոնկրետ լեզվով խոսող հանրության հավաքական հիշողության փաստագրումն ու հանրային միասնական ձևավորումը: Վաղ գրային ժամանակներից սկսած, գրավոր են ազդարարվել իրավունքներն ու դրանց սուբյեկտները, դաշինքներն ու օրենքները, գրավոր խոսքն է ապահովել գիտելիքի հստակությունն ու սերունդների կրթության շարունակականությունը, դրանով են նախապատրաստվել հեղափոխությունները: Ավելին, ժամանակի և տարածության խոչընդոտները բացառելու համար, դեռ անտիկ ժամանակներում իշխանավորներն օգտվում էին միևնույն տեքստը տարբեր լեզուներով ներկայացնելու հնարից: Եվ այդ ջանքերն արդարացրել է ժամանակն ու մարդկության պատմական գիտակցությունը:

Համաշխարհային արդյունաբերական հեղափոխությունները ազդարարվել են գիտական խոշոր հայտնագործություններով և դրանց ազդեցությամբ՝ հաղորդակցության միջոցների թռիչքաձև զարգացումներով [Information and Communication Technology (ICT) Industry in the Fourth Industrial Revolution: Prospects and Challenges for Workers in Asia-Pacific, n.d.]: Առաջին արդյունաբերական հեղափոխությունը, որն սկսվեց XVIII դարի կեսերին, բնութագրվում է տնտեսության ագրարայինից արդյունաբերականի անցումով, և հաճախ կապվում է մեխանիկայի բնագավառում Իսահակ Նյուտոնի կատարած բացահայտումների հետ: Սակայն պետք է ընդունել, որ լուսավորության դարաշրջանը չէր սկսվի առանց XV դ. Գուտենբերգի տպագրության գյուտի, որը լայն տարածում գտավ XVI դարում [Johannes Gutenberg's Greatest Accomplishments - World History Edu, n.d.]: Արտադրության մեքենայացումը, երկաթի և ածխի արդյունահանման մեքենայացումը, գոլորշու էներգիայի և տպագրության գյուտը աշխուժացրին հասարակության հաղորդակցությունն ու կառուցվածքը: Զարգացան այն տարածաշրջանները, որոնք կարողացան ավելի արագորեն ներդնել նոր տեխնոլոգիաները: Հայ ժողովուրդն այստեղ մեծապես շահեց, երբ Հակոբ Մեղապարտը Վենետիկում հիմնեց առաջին հայալեզու տպարանը և 1512 թ. սկիզբ դրեց հայ տպագիր մշակույթին [Հայոց Մշակույթ - mfa.am, n.d.]: Դա նշանակում էր նոր՝ հզոր թարգմանչական շարժում, հայալեզու կրթության տարածում, մտավորականության ձևավորում, գաղափարական աճ, և լեզվի արդիականա-

ցում ու ստանդարտացում, որն այն դարձնում էր հասանելի և մատչելի հայ ժողովրդի ավելի լայն, այն ժամանակ արդեն աշխարհասփյուռ զանգվածների համար:

Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը (1870-1914) հիմնականում պայմանավորված էր ներքին այրման շարժիչի, էլեկտրական էներգիայի և դրանց կիրառությամբ զարգացած արտադրության և հաղորդակցության միջոցներով, որոնք խթանեցին զանգվածային հաղորդակցությունը: Եվ կրկին, ծավալային և որակական գերազանցություն ստացան այն երկրները, որոնք առաջինը ներդրեցին նորարարական տեխնոլոգիաները: Մինչդեռ, բնական մեծ պաշարներ և մշակութային դարավոր ժառանգություն ունեցող ժողովուրդները հայտնվեցին կախյալ գաղութային վիճակում [Overview of the Second Industrial Revolution, n.d]: Հայ ժողովրդի համար սրանք եղան ազատագրական կոիվների ու գոյապայքարի տասնամյակներ, որոնք ավարտվեցին առաջին համաշխարհային պատերազմում տված դաժան կորուստներով և իր բնակության տարածքում կախյալ պետականության հաստատումով:

Երրորդ՝ հաշվողական տեխնոլոգիաների բերած հեղափոխությունը, մեկնարկը առավ քսաներորդ դարի երկրորդ կեսին, և էլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի ժայթքումային տարածմամբ ազդարարեց նոր փոփոխությունների սկիզբը, որոնց միջով այսօր անցնում է հայ ժողովուրդը՝ սփռված աշխարհով մեկ և իր պետության ներսում: Եվ եթե Հակոբ Մեղապարտի տպագրության գյուտը հայերենը դրեց այդ շարքի երրորդ տասնյակում, ապա այսօր՝ թվայնացված հաղորդակցության անցած լեզուների շարքում հայերենը, ըստ մի շարք թվայնացված տեղեկատուների, յոթերորդ տասնյակում է: Օրինաչափորեն, այս տվյալը բացատրվում է Հայաստանի՝ SS ոլորտում գրանցած առաջընթացով, ըստ որի այն ևս պետությունների ցանկի յոթերորդ տասնյակում է [UNECE, n.d.]

Ուշադրության արժանի է այն փաստը, որ բոլոր ժամանակներում, լեզվի պահպանության և զարգացման մեծագույն գրավականն եղել է և կա դրա գրավոր կրիչը. ո՞ր չափով, որ այն ծառայեցվել է լեզվի օգտագործմանը և տարածմանը, ա՞յդ չափով էլ պահպանվել ու զարգացել է լեզուն: Գրավոր կրիչի և ինքնին գրելու հարմարավետությունից է կախված նաև այդ լեզուն գործածող և կրող մարդկանց քանակը:

Միանգամայն հստակ է, որ տեխնոլոգիական ծառայությունների արագացման, հիբրիդային պատերազմների մեր դարաշրջանում, աճող հայ սփյուռքի ու պաշտոնապես վտանգված համարվող արևմտահայերենի անխուսափելի փոփոխության պարագայում, հայոց փաստագրված լեզվական գիտակցության թվային համակարգումը կարող է բազմակի նշանակության արդյունքներ ապահովել պետության տնտեսության, կառավարման, արտաքին և ներքին քաղաքականության, սփյուռքահայության կենտրոնացման, կրթության և մի շարք այլ ոլորտներում: Անհրաժեշտ է հավաքել պիտակավորված, լեզվաբանորեն լիարժեք մշակված թվային կորպուսներ, ժամանակին համընթաց և հաստատված՝ ինստիտուցիոնալ կարգով ապահովել դրանց շարունակական կայուն զարգացումն ու գործածությունը հիշյալ նպատակներով: Լեզվական կորպուսների կամ շտեմարանների գիտակրթական համակարգի ներդրումը ՀՀ բուհերից որևէ մեկում շեշտակի զարգացում կբերի՝ բացելով նոր հետազոտական և արդյունաբերական ոլորտներ թե՛ SS ոլորտին, թե՛ տեղիս և գլոբալ գիտելիքի իրազեկ կիրառությանը որոշումների ու գործադիր ոլորտներում, և թե՛ կրթության արդիականացմանը: Բնականաբար, նման լայնածավալ և շարունակական գործընթաց սկսելը միմիայն հնարավոր է պետական հոգածության և շահագրգիռ մասնակցության պարագայում:

Տարաբնույթ հաղորդակցությունն ու որոշումները սպասարկող տեղական գիտելիքի լեզվական կազմակերպումը թվային եղանակով վճռորոշ է պետական միավորին ամրակուռ բնույթ հաղորդելու հարցում: Այն մի կողմից նպաստում է մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների տարածմանը՝ փոխարինելով ազդեցության թելադրման բռնի և ֆիզիկական եղանակները ավելի փափուկ՝ տեղեկատվական, հոգեբանական, արժեքաբանական ներգործման միջոցներով:

Պատահական չէր, որ քսաներորդ դարակեսին տնտեսական գաղութացման անկմանը անմիջապես փոխարինելու եկան նույն սուբյեկտների կողմից ներդրված լեզվական գաղութացման մեխանիզմները՝ այժմ արդեն թվային հաղորդակցության և գիտության ոլորտին իրենց լեզվական գերշխանությունը թելադրող քաղաքականության տեսքով: Օբյեկտիվության համար չնոռանանք նշել, որ ցանկացած գերշխանություն տարածվում է իր ունեցած արժանիքների շնորհիվ, և բացի գաղութացումից՝ բերում է զարգացում: Հենց այս տրամաբանությամբ, ձեռք ձեռքի տված SS և անգլերենի տիրապետությունը, իր բոլոր վնասներով հանդերձ, բազմազանեց հեռահաղորդակցությունը, դյուրին դարձրեց գիտության ստանդարտացումը և արդյունքների տարածումը:

Սակայն փոքր ազգի առաջին հերթին պետական շահերի տրամաբանությունից ելնելով՝ դժվար չէ նկատել, որ օտար լեզվի գերակայությունը գիտության ոլորտում մեկուսացնում և գիտական մտածողությունից օտարում է մայրենի կամ տեղի պետական լեզուն: Այս մտահոգությունն ունեն անգամ այնպիսի բազմամիլիոնանոց լեզվական համայնքներ և պետություններ, ինչպիսիք են իսպանախոս [Bordons & Gomez, 2004], ֆրանսախոս երկրները, գերմաներենը, ռուսերենը²: Բացի գիտական մտածողության օտարումից՝ փոքր և վտանգված լեզուների հետ միասին վտանգվում է այն մշակութային և պատմական գիտելիքն ու գործունեությունը, որն աննկատ, կամ ավելի ճիշտ՝ ճանաչողության հարցով զբաղվող մասնագետի աչքին միայն տեսանելի կերպով կրում է դարավոր գիտելիք ու փորձ, մտածելակերպի ռացիոնալացում, ուղղակի տեղեկություն իր ժամանակի, տեղանքի և ժողովրդի արժեհամակարգի մասին: Հայ վիմագրությունն այդպիսի բազում օրինակներ ունի:

Ճանաչողական լեզվաբանությունը նաև մի հայտնի դրույթ ունի այն մասին, որ յուրաքանչյուր լեզու հարուստ է կենսագործունեության կամ բնությունը նկարագրող այն բառապաշարով, որը բնորոշ է այդ լեզվակիր մշակույթին: Հայոց գրավոր մշակույթը, սկսած սեպագրերից մինչև վիմագիր արձանագրություններ, երկաթագիր ձեռագրեր և զարդագիր մանրանկարչություն, ապա և տպագիր գործունեությունն աշխարհի չորս ծագերում այդ հարստության ապացույցն են: Այսօր սակայն, այս մշակույթը բավարար կերպով ներկայացված չէ համաշխարհային հաղորդակցության նոր՝ *թվանշագիր ցանցում (digital networks)*:

Ահավասիկ, մենք այժմ մտել ենք չորրորդ արդյունաբերական հեղափոխության փուլ, որը երրորդի շարունակությունն է թվային, կենսաբանական և գիտելիքահեն այլ տեխնոլոգիաների սերտաճման առումով, նշանավորվում է արհեստական բանականության, տեսահաղորդակցության և կենսատեխնոլոգիաների զարգացումով: Այս հեղափոխությունը «խելացի տեխնոլոգիաների» և «իրազեկ որոշումների» հեղափոխություն է, որոնց կայացմանը ի սպաս են դրվում համացանցային գիտելիքը, թվային հիշողությունը, փաստագրված մտքի և զգացմունքների ալգորիթմական օրինաչափությունները և փոքր գործառնությունների ավտոմատացված կառավարումը: Ահա թե ինչու հայերեն գրավոր լեզվական գիտակցության և հաղորդակցության թվային շարունակական մշակմամբ ստեղծված շտեմարանների և խոշոր լեզվական տվյալների մոդելավորումն ու դրանց նպատակային գործածությունը իրազեկ որոշումների հրամայականն է մեր ժողովրդի և պետության կյանքի բացարձակապես բոլոր ոլորտների համար:

Այս հրամայականի գիտակցումով էր, թերևս, որ հանրապետությունում մի քանի նախաձեռնություններ սկիզբ առան, միմյանցից անկախ, բայց ոչ պատահաբար՝ գրեթե միաժամանակ [Hovhannisyana, Tufekchyan, 2014]: Հայաստանի ազգային գրադարանում սկիզբ դրվեց գրավոր մշակութային ժառանգության թվայնացմանը, որը ռեսուրսային բազա է ստեղծում այդ տեքստերի՝ որպես բնական լեզվի և աշխարհի հայալեզու պատկերի կամ հայոց լեզվական գիտակցության մշակման համար: Նշենք, որ այդ ռեսուրսային բազային են պատկանում նաև օտար լեզուների հայերեն թարգմանությունները: Միևնույն ժամանակահատվածում ՀՀ

²Տե՛ս https://iling-ran.ru/web/ru/news/210826_kibrik կայքը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Եվրամիությունից համաֆինանսավորվող Էրազմուս + «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ArmDoct) ազգային ծրագրի նախաձեռնությամբ մի շարք բարձրագույն կրթական հաստատություններ ձեռնամուխ եղան մշակելու արտադրական արդյունքներին ուղղված նոր հետազոտական միջգիտակարգային ուղղություններ³։ Ծրագրին մասնակցող Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մասնագիտական խումբը ներկայացավ հասարակական հաղորդակցության լեզվական թվայնացմանը նվիրված «Կիրառական լեզվաբանություն» մասնագիտության նոր՝ բնական լեզվի մշակման ուղղությունը զարգացնելու առաջարկով։ Դրա մյուս թևը կարելի է համարել պատմամշակութային ժառանգության թվայնացմանը նվիրված՝ «Թվային հումանիտար գիտություններ» մասնագիտության ներդրման երկրորդ նախաձեռնությունը՝ այսպիսով ամբողջացնելով հայ գրավոր ժառանգության և ներկա զարգացումների թվային կառավարման հայեցակարգը։ Այս երկու ուղղություններն ունեն մեկ ընդհանրություն, որը սակայն, թույլ չի տալիս նաև դրանք նույնացնել։ Այդ ընդհանրությունը լեզուն է՝ առաջին դեպքում շարունակաբար առկայացող խոսքի, իսկ երկրորդում՝ անփոփոխ արձանագրված և պատմական ժառանգության կարգավիճակով։

Թեև կան գրավոր և բանավոր հայերենի թվայնացման մի քանի նախաձեռնություններ, լեզվական շտեմարանների առկայության առումով հայերենը զիջում է աշխարհի մի քանի տասնյակ լեզուների, որոնք սրընթաց կերպով ինտեգրվում են համացանցային հաղորդակցության և գիտելիքի փոխանակմանը։ Դրանցից առաջինը Արևելահայերենի ազգային կորպուսն է՝ ԱՐԵՎԱԿ-ը [Արևելակ կորպուսի կայքէջ]։ ԱՐԵՎԱԿ-ի նախագիծը գործարկվել է 2006 թվականին, սակայն այն 2009 թվականից հետո չի թարմացվել, ուստի չի կարող գործածվել որպես արդի լեզվական գիտակցության գործնական խնդիրների լուծման աղբյուր։ 2009 թ. մարտի դրությամբ ԱՐԵՎԱԿ-ն ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք։

Մյուս նախաձեռնությունը «Հայերենի ծառադարան»-ն է։ «... նախագիծը մաս է կազմում Universal Dependencies (UD) – «Համընդհանուր կախվածություններ» հարթակի, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար» [Յավրումյան, Դանիելյան, 2020, 234]։ Ծառադարանը պարունակում է շուրջ 100 հազար բառամթերք և 5 հազար շարահյուսական ծառ [Հայերենի ծառադարանի կայքէջ]։

Հաջորդը «Ազգային արագացման հանրային նախաձեռնությունն» է [Ազգային արագացման նախաձեռնության կայքէջ], որն «իրականացնում է հայերեն լեզվով մեքենայական սարքերի հետ հաղորդակցության գործիքների՝ արհեստական ձայնի սինթեզի TTS (Text to Speech), խոսքի ճանաչման ASR (Automatic Speech Recognition), մեքենայական թարգմանության NMT (Neural Machine Translation) մշակումը»։ Հարկ է նշել, որ այս նախաձեռնությունը պատրաստականություն էր հայտնել համագործակցելու և հուշագիր է ստորագրել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հետ՝ նախադեպ ստեղծելով ՀՀ համալսարանական միջավայրում բնական լեզվի կայուն-շարունակական աշխատանքներ ապահովելու առումով։ Վերջապես, այս համագործակցության միջոցով Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի հետազոտական խումբը 2022-2023 թթ. ներքին դրամաշնորհային ծրագրով նախաձեռնեց և իրականացրեց «Հայերեն-անգլերեն գուգահեռ կորպուսների ստեղծման հիմունքների և չափանիշների մշակում» նախագիծը⁴։ Այդ

³ Տե՛ս <https://armdoct.com/> կայքում։

⁴ Տե՛ս https://brusov.am/hy/content/teghi_unecav_hayeren-angleren_zugaher_korpusneri_steghtsman_himunqneri_chapanishneri_ev_gortsiqneri_pordzarakan_hetazotu/#sthash.rNa9j7n1.dpbs կայքում։

ծրագրի մտահղացումն ուներ մի քանի խնդիր՝ հետազոտելու և գաղափարներ փորձարկելու կասկադային կառուցվածք, որը ներառում էր թեմայի գիտական, կրթական, մեթոդական, տեխնիկական, ուսուցողական և էթիկական հարթությունները, ուներ մեթոդաբանական և արտադրական բաղադրիչներ: Այս մոտեցումները, միմյանց լրացնելով, ապահովեցին ծրագրի սահուն ընթացքը և հաջող ավարտը, քանի որ գիտելիքի տարածման բարձր արագությունների միջավայրում, և հայերենի նման գոյապահպանական խնդիրների առերեսված փոքրաթիվ լեզուն միայն համալիր լուծումներով է կարող հաղթահարել ապագայի մարտահրավերները: Վ. Բրյուսովի անվան համալսարանում իրականացված, կրթական լուրջ բաղադրիչ պարունակող այդ ծրագիրը [Երկլեզու հավասարեցման կուրսային աշխատանքների մեթոդական ուղեցույց] փորձառական հետազոտություն էր ավանդական լեզվական կրթության բազայի վրա նորարար՝ թվային թարգմանությունների բաղադրիչներ ներդնելու առումով: Խմբի միացյալ ուժերով մշակվեց այն գիտական մեթոդաբանությունը, որով և հետազոտական խումբն իրականություն դարձրեց առաջին հայացքից անկարելի թվացող նախաձեռնությանը՝ «Թարգմանչական գործ» մասնագիտության շրջանակում առցանց էլեկտրոնային հարթակի օգնությամբ հավաքել ավելի քան 1000 էջ հայերեն և անգլերեն զուգահեռված տեքստեր՝ ներգրավելով մոտ 100 ուսանողի և 40 տարբեր տարիքի և թվային հմտություններ ունեցող դասախոսի:

Զուգահեռաբար, եվրոպական փորձի փոխառման նպատակով ԲՊՀ անգլերենի թարգմանության ամբիոնում գործարկվեց նաև Լյուվենի Կաթոլիկ համալսարանի հետ թարմացված MUST կամ «Ուսանողական բազմալեզու թարգմանություններ» ծրագրի համաձայնագիրը, ըստ որի եվրոպական համալսարանների ուսանողների կողմից զուգահեռ հավասարեցման մեթոդով կատարված թարգմանությունները [Granger & Lefer, 2023] ներդրվում են արհեստական մտքի ձևավորման հիմքում և ստեղծվում են թվային զրուցրնկերներ: ԲՊՀ-ում նման հայերեն հարթակի առկայությունը մեծ գիտակրթական առաջընթաց կապահովի նաև լեզվական շտեմարանների կամ կորպուսների մշակման ուղղությամբ:

Ծրագրի միջոցներով իրականացվեցին նախատեսված բոլոր անելիքները, արդյունքները ներկայացվեցին մի քանի տեղական և միջազգային հրապարակումներում [Հովհաննիսյան, 2023; Հովհաննիսյան, Այդինյան 2022; Hovhannisyan, 2023]: Այն, մասնավորապես մեծ հետաքրքրություն առաջացրեց առաջատար գիտական հրատարակչություններում, որոնցից մեկի հետ հետազոտության արդյունքների հրատարակման համաձայնագիր է ստորագրվել: Համալսարանական ուսանողության կրթության ճիշտ կազմակերպման պարագայում կարելի է ավանդաբար լեզվաբանական այս ոչ մեծ համալսարանում էլ տեղակայել հայերենի բազմալեզու զուգահեռներով կորպուսների մշակման, հետազոտման և արդյունքում ստացված տեղեկությունների բաշխման գիտաարտադրական հաստատությունը: Այն կդառնա հայերենի հաղորդակցության նոր դարբնոց, որտեղ կկոփվի նոր մտածողությամբ օժտված երիտասարդ մասնագետների սերունդը, կգոյանան հաղորդակցության վերլուծության և հիմնավոր գիտելիքի օգտակար պաշարներ, կգեներացվի մտավոր և հոգևոր արժեքների նոր ներուժ:

Ի՞նչ կտան մեզ լեզվական շտեմարաններն ու դրանք մշակող մասնագետները: Նախևառաջ, իրազեկ անվտանգություն, որն սկսվում է մշակութային ժառանգության համակարգված պահպանությունից և համաշխարհային համանման գիտելիքի շտեմարանների հետ դրանց փոխգործուն ինտեգրումից, լեզվական հաղորդակցության գրավոր և բանավոր արտադրանքը համակարգված կերպով տնօրինելուց և ըստ նպատակորվածքի մշակելուց: Նման իրազեկ ինտեգրում համաշխարհային տեղեկատվական հոսանքներին ու գիտական հարթության վրա հավասար մասնակցի իրավունքով ներկայությունը միշտ քաղաքական շահի իր ածանցյալներն ունի, ինչպես անվտանգային, այնպես էլ կառուցողական համագործակցության բնագավառներում:

Այնուհետև, հայ ժողովուրդը և լեզվաբանական աշխարհը կստանան հայոց լեզվի երկու ճյուղերի արդիական պատկերի մասին համապարփակ և փաստագրված տեղեկություն՝ այս-

տեղից բխող լեզվաքաղաքական որոշումների հնարավորությամբ հանդերձ: Համացանցային հաղորդակցության բացարձակապես բոլոր ոլորտներում մեծացող ներգրավվածություն, իրավահավասար մասնակցություն և այսպիսով, հայոց լեզվի երկու ճյուղերի գործածության հավասարվող իրավունքներ, հատկապես սփյուռքի հայության համար՝ լեզվամշակութային պաշտպանվածություն:

Երրորդ, մենք լիարժեք իրազեկություն ձեռք կբերենք մեր լեզվական հիշողության և գիտակցության մեջ ամբարված տեղեկությունների և գիտելիքի (ներառյալ փաստագրված բանահյուսությունը, ձեռագրերն ու վիմագրությունը) նկատմամբ: Դրանից ստացված հնարավորությունը հավասար է արդի աշխարհաքաղաքական միջավայրում սեփական տեղի և նշանակության մասին գիտելիքի լիարժեք տիրապետում և տնօրինություն, դրանցից բխող բոլոր առավելություններով հանդերձ տեղական որոշումների և միջազգային ներկայացվածության, դիվանագիտության, տնտեսության, կապիտալի և այլ բնագավառներում:

Ի՞նչ ենք կորցնում մենք հայոց լեզվի՝ համակարգային թվայնացումը և գործուն լեզվական շտեմարանների կառուցումը հետաձգելով: Առաջին հերթին՝ ապագայում մեր լեզուն ազատորեն, կյանքի բոլոր ոլորտներում գործածելու հնարավորությունը: Խոսողների թվի նվազումը կհանգեցնի փոխանցվող ազգամշակութային գիտելիքի և դրանով պայմանավորված ինքնության շրջանակը, քանի որ հայերենը կմնա լավագույն դեպքում կենցաղային՝ նեղ շրջանակներում գործածվող լեզու: Կոդարի զարգանալ հայալեզու կրթության անհրաժեշտությունը, գիտությունը, գիտակցությունը, ինքնագիտակցությունը, ազգային սուրբեկտայնությունը: Չունենալով լեզվի թվային համատարած փաստագրված տվյալներ՝ մենք ժամանակի ընթացքում կկորցնենք պատմական և մշակութային կապն անցյալի հետ: Վերը նշված երևույթներն սկսվում են հաղորդակցական, քաղաքական և տնտեսական սահմանների նեղացումով և հաջորդող մեկուսացման սպառնալիքով, որն արդեն իրողություն է:

Լեզվի վտանգումը կասեցնելու ջանքերը պետք են հիմա, քանի դեռ հարաճուն այդ վտանգը անդառնալի մշակութային և քաղաքակրթական փոփոխությունների չի հանգեցրել: Մեկուսացման գնալով նեղացող օղակը ճեղքելու և հայության լեզվամշակութային տարրալուծման գործընթացները կասեցնելու համար պետք է հրատապ կերպով պաշտոնական հայերենն իր ճյուղերով, որպես լիարժեք քաղաքական-տնտեսական և մշակութային միավորի՝ ազգային գործածության լեզու, կապել համաշխարհային գործընթացներին, բարձրացնել նրա շրջանառությունը նախ SS աշխարհում, ապա վերը նշված բոլոր հարթություններում՝ հանուն հայության վերածնունդի:

SUMMARY

At different stages of the development of civilization, the languages that could make the transition to the new technologies of science and communication have flourished and developed. The article discusses several conceptual issues dedicated to the issue of the continuity of Armenian written culture and introduces the steps towards the digitization of Armenian, both taken and anticipated. Armenian written culture, from epigraphy to the present state, is the result of the concerted efforts of scientists who are dedicated and deeply aware of the challenges thrown by time and their supporting governors and businessmen. We must create conditions so that our language gets the opportunity to adapt to the changes dictated by the environment and new media and promote it to develop in the new digital conditions of communication because it is the direct repository of our linguistic consciousness and self-awareness. In the first part of the article, parallels are drawn between the Industrial Revolution and the stages of written culture development. The second part presents the projects and initiatives that have been launched toward the digitization processing of the Armenian language and corpora.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազգային արագացման նախաձեռնության կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://hayq.ican24.net/hyemnt/index.php>, 29.10.2023:
2. Արեւակ կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://www.eanc.net/am/composition/>, 29.10.2023:
3. Երկլեզու հավասարեցման կուրսային աշխատանքների մեթոդական ուղեցույց, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://docs.google.com/document/d/1bwjxW5muT4ycdb82EUaxHUG8o01PKWOC/edit#https>, 05.12.2023:
4. Հայերեն ծառադարանի կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://armtreebank.yerevann.com/>, 29.10.2023:
5. Հայոց մշակույթ - Mfa.am. (n.d.). [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.mfa.am/hy/culture/>, 17.11.2023:
6. Հովհաննիսյան Գ. Հաղորդակցման գրական տեսակը և դրա արդի զարգացումները. մարդաբանական մոտեցում // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները, Պրակ ԺԴ, Լինգվա, Երևան, 2023, էջ 188 - 201.
7. Հովհաննիսյան, Գ. Արամ Հայրապետյանի «Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին» աշխատության գրախոսություն // Լեզու և լեզվաբանություն, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Երևան, 2023, էջ 72-76:
8. Հովհաննիսյան, Գ., Ալիկյան Ս. Թվայնացված գրականությունից մինչև լեզվական շտեմարաններ. դրանց նշանակությունը, հեռանկարներն ու մարտահրավերները // Բանբեր Հայաստանի գրադարանների: Գիտամեթոդական հանդես: Հատուկ թողարկում, Երևան: «Գիրք» հրատարակություն, 2023. էջ 66 – 70, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://doi.org/10.52027/18294685-hga2023.sp.>, 17.11.2023:
9. Յավրույան Մ., Դանիելյան Ա. Համընդհանուր կախվածություններ և հայերենի ծառադարանը // Լրաբեր հասարակական գիտությունների, 2020, էջ 231-244:
10. Bordons, M., & Gomez, I. (2004, July 1) Towards a single language in science? A Spanish view. *Serials: The Journal for the Serials Community*, 17 (2), 189-195. [Electronic Publication] URL: <https://doi.org/10.1629/17189>, 17.11.2023.
11. Granger, S., & Lefer, M.-A. (2023). Learner translation corpora: Bridging the gap between learner corpus research and corpus-based translation studies. *International Journal of Learner Corpus Research*, 9 (1), 1-28. [Electronic Publication] URL: <https://doi.org/10.1075/ijlcr.00032.gra>, 05.12.2023.
12. Homepage | UNECE. (n.d.) [Electronic Publication] URL: <https://unece.org/>, 17.11.2023.
13. Hovhannisyan, G. Enhancing Student Learning Through Parallel Language Corpus Creation. Video presentation, “The Problem of Learning in Morocco,” Marrakech, Morocco, 2023.
14. Hovhannisyan, G. The Architecture of Language Personality // Individual and Contextual Factors in the English Language Classroom, Springer, Cham, 2022, pp. 79-95.
15. Hovhannisyan, G., Tufekchyan, M. Armenian and English Language Documentation and Description. Yerevan, P. Sevak publishing, 2014, 129 pages.
16. Information and Communication Technology (ICT) Industry in the Fourth Industrial Revolution: Prospects and Challenges for Workers in Asia-Pacific. (n.d.). [Electronic Publication] URL: https://www.researchgate.net/publication/324167731_Information_and_Communication_Technology_ICT_Industry_in_the_Fourth_Industrial_Revolution_Prospects_and_Challenges_for_Workers_in_Asia-Pacific, 17.11.2023.
17. Johannes Gutenberg’s Greatest Accomplishments – World History Edu. (n.d.). [Electronic Publication] URL: <https://www.worldhistoryedu.com/johannes-gutenberg-accomplishments-technology-bible/>, 17.11.2023.
18. Overview of the Second Industrial Revolution. (n.d.). ThoughtCo. [Electronic Publication] URL: <https://www.thoughtco.com/second-industrial-revolution-overview-5180514>, 17.11.2023.